ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Շահումյան 20/32, 3301:
Հեռ.՝ (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1720: Գինը՝ 100 դրամ

ISSN 1829-3468

Եւ Աստուած ասաց. «Թող լոյս լինի»: Եւ լոյս եղաւ...
ԾՆՆԴՈՑ, 1,3

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 12 ՄԱՅԻՍԻ 2016Թ.
№ 15 (391)

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

Գորիսի պետական քոլեջի դասախոսական անձնակազմը, 29 ապրիլի 2016թ.
ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ՄԵԼԻՔ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ

Տարեկան միջին հաշվով 130 դիմորդ եւ նույնքան շրջանավարտ...

– Մեր զրույցը տեղի է ունենում 2016-17 ուսումնական տարվա նախապատրաստության, ավելի ճիշտ՝ նոր ընդունելության նախապատրաստման ամենաբուռն շրջանում: Եվ, բնականաբար, կուզեինք գլխավորապես դրան առնչվող հարցեր քննարկել:

Նախ՝ միջին մասնագիտական կրթական ծրագրերով ի՞նչ մասնագիտություններով ընդունելություն կկատարվի նոր ուսումնական տարվա համար:

– Միջին մասնագիտական կրթական ծրագրերով՝ Հաշվողական տեխնիկայի եւ ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում, Նախադպրոցական կրթություն, Դեղագործություն, Քույրական գործ, Մանկա-

էջ 4

ԿԱՐԵՆ ԼԱԶԱՐՅԱՆ.

«Ուսանելու եկեք Գորիսի պետական քոլեջ եւ կստանաք հիմնավոր գիտելիքներ ու պահանջված կլինեք աշխատաշուկայում»

Դարոն Լազարյան, վերջին անգամ մեր թերթին հարցազրույց տվեցիք չորս տարի առաջ («Սյունյաց երկիր», N17, 20 հուլիսի 2012թ.): Ինչպե՞ս կբնութագրեք հաջորդող ժամանակաշրջանը Գորիսի պետական քոլեջի համար:

– Ընդհանուր առմամբ քոլեջում բարելավվեց մասնագիտական կրթության որակը, հզորացան աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կադրերի պատրաստման կարողությունները:

Կատարված աշխատանքները հնարավորություն տվեցին լուծել կրթօջախի առջեւ ծառացած խնդիրների մի մասը, ապահովեցին քոլեջի գործունեության կայուն ընթացք եւ նախադրյալներ ստեղծեցին հետագա զարգացման համար:

Որոշակիորեն արդիականացվեցին ուսումնամեթոդական նյութերը, հարստացավ նյութատեխնիկական բազան:

Զարգացման համար

Միջին մասնագիտական եւ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթությունը, որ Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի կարեւոր բաղադրիչն է, եղել եւ մնում է հանրության ուշադրության կենտրոնում: Հատկապես հանրակրթական դպրոցների շրջանավարտներին ու նրանց ծնողներին, գործատուներին հետաքրքրում են այդ ոլորտում տեղի ունեցող վերափոխումները:

Սյունիքի մարզի համանման ուսումնական հաստատությունների շարքում իր ծանրակշիռ տեղն ունի Գորիսի պետական քոլեջը, որը ծնունդ է առել 1928 թվականին եւ գործել նախ՝ Գորիսի մանկավարժական տեխնիկում, 1966 թվականից՝ Գորիսի մանկավարժական ուսումնարան, 1998 թվականից՝ Գորիսի պետական մանկավարժական քոլեջ, 2008 թվականից՝ Գորիսի պետական քոլեջ անվանումներով:

Ուսումնարանն ի սկզբանե եղել է Սյունիք-Զանգեզուր տարածաշրջանի լավագույն կրթօջախներից մեկը, որն իր գործունեության ընթացքում պատրաստել է մանկավարժական կադրեր եւ բավարարել Սյունիքի ու Վայոց ձորի, ինչպես եւ Լեռնային Ղարաբաղի կրթական հաստատությունների (եւ ոչ միայն) կադրերի պահանջարկը: Կրթօջախի շրջանավարտների մի մասն էլ շարունակել ու շարունակում է ուսումը հանրապետության տարբեր բուհերում: Նրանցից մոտ 50 հոգի դարձել են անվանի գրողներ, ակադեմիկոսներ, մանկավարժներ, բժիշկներ, փիլիսոփաներ, ովքեր եղել եւ մնում են կրթօջախի փառքը:

Մոտ 90-ամյա կրթօջախը, չնայած ժամանակի վայրիվերումներին, պահել է իր ինքնատիպությունը՝ արժանի եւ մնայուն տեղ զբաղեցնելով հանրապետության միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շարքում:

Գորիսի պետական քոլեջն այսօր էլ հաստատուն քայլերով շարունակում է իր ազգանպաստ առաքելությունը եւ հարստացնում տասնամյակներով ձեւավորված ավանդույթները. 255 ուսանող այնտեղ ստանում է միջին մասնագիտական եւ արհեստագործական կրթություն:

Քոլեջի ներկա ընթացքի, ծրագրերի ու անելիքների, ինչպես եւ առկա խնդիրների մասին է զրույցը «Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրեն Կարեն Լազարյանի հետ:

Խոսք Գորիսի պետական քոլեջի մասին

ՍՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետ

Գորիսի պետական քոլեջի մասին խոսք ասել՝ նշանակում է նախեւառաջ բարեբանել այդ ուսումնական հաստատությունը, քանզի 20-րդ դարում ոչ մի կրթօջախ այդքան լույս չի սփռել մեր երկրամասում, որքան այդ հաստատությունը: Ոչ մի կրթօջախ այդքան պտղաբեր ու արգասաբեր չի եղել՝ գիտության, արվեստի, մանկավարժության, կառավարման ոլորտի գործիչներ ու մասնագետներ կրթելով եւ ձեւավորելով, որքան այդ հաստատությունը:

Այդ կրթօջախն էր, որ անցած դարասկզբին, Շուշիի հայկական ռեալական ուսումնարանից հետո, վերականգնեց դեռեւս վաղ միջնադարում ծնունդ առած Սյունիքի վարդապետարանի, ապա Տաթեւի համալսարանի եւ միջնադարյան գրիչների ու ծաղկողների ստեղծարար ընթացքը մեր երկրամասում:

Քանի-քանի սերունդ այդ օջախում գիտելիքների պսակով պաճուճվեց ու զորացրեց մեր պապերի ու ծնողների քայլքը:

1928թ. (որոշ տեղեկություններով՝ 1923թ.) հիմնադրված ուսումնարանը նախաշավիղ եղավ մարզի կրթական ոլորտի հետագա զարգացումների համար: Դրանից տասնամյակներ հետո միայն (բացի Գորիսի գյուղտեխնիկումից) մեզանում վերընձյուղվեցին միջին մասնագիտական, պրոֆտեխնիկական եւ բուհական նոր հաստատությունները:

Այդ կրթօջախում են առաջին փայլատակումներն ունեցել մեր քանքարավոր շատ հայրենակիցների ձիրքն ու շնորհքը՝ Սերո Խանզադյան, Սուրեն Այվազյան, ակադեմիկոս Վահան Ղազարյան, գիտությունների տասնյակ դոկտոր-պրոֆեսորներ, նշանավոր պետական գործիչներ:

Գորիսի պետական քոլեջն իր փառքն ու համբավը ձեռք է բերել մանկավարժների, կրթության ոլորտի երախտավորների նախորդ մի քանի սերունդների նվիրական աշխատանքով, տասնամյակների արարումով: Հանրակրթական դպրոցում իմ ուսումնառության տարիներին Գորիսի թիվ 3 միջնակարգ ու Գորիսի մանկավարժական ուսումնարանը շենքային միեւնույն համալիրի տարբեր բաժիններում էին, եւ ականատես էի, թե ինչպիսի ակնածանք կար այդ հաստատության նկատմամբ: Տեսնում էի, թե տնօրեն Դրաստամատ Օհանյանը եւ ուսմասվար Արտավազդ Յոլյանն ինչպիսի հոգածությամբ ու տքնանքով են կազմակերպում ուսումնարանի կրթական գործն ու առօրյան:

Տարիների հեռվից սյունեցիների գոհությունն եմ մատուցում ուսումնարանի բոլոր երախտավորներին, նաեւ նրանց, ովքեր չկան:

Ուրախությամբ եմ նկատում, որ ոչ սովորական մեր ժամանակներում Գորիսի պետական քոլեջին հաջողվում է պահպանել նախորդ տասնամյակների ավանդույթները, հարստացնել դրանք եւ իրագործել նորօրյա իր առաքելությունը՝ աճող սերնդի կրթության ու դաստիարակության, իսկ վերջին տարիներին՝ նաեւ արհեստագործական մասնագիտությունների ներդրման ուղղությամբ: Եվ այդ ամենը՝ շնորհիվ տնօրենության հմուտ աշխատանքի, դասախոսական անձնակազմի պրոֆեսիոնալ ու նվիրական գործունեության, փորձառու մանկավարժների ու երիտասարդ կադրերի ջանքերի համատեղման, մասնագիտական կրթության առաջավոր փորձի յուրացման ու տեղայնացման:

Իսկապես, այսօր էլ Գորիսի պետական քոլեջը Սյունիքի մարզի կրթական-մշակութային եւ արժեքային համակարգի անկապտելի բաղադրիչն է: Միայն վերջին տարիների ընդունելության ցուցանիշների (տարեկան՝ միջին հաշվով 130 դիմորդ) համադրումն ու համեմատումը համանման կրթօջախների հետ հիմք են տալիս ամրապնդել մեր համոզմունքը, որ Գորիսի պետական քոլեջը պահանջված է հանրակրթական դպրոցների շրջանավարտների, նրանց ծնողների, գործատուների կողմից, որ քոլեջի շրջանավարտները քննություն են բռնում կյանքում:

Բազմաթիվ մարտահրավերներին դիմակայելու, մրցակցային առկա մթնոլորտում սեփական վարկանիշն ու դեմքը պահպանելու համար շարունակ փոփոխվում է քոլեջում ուսուցանվող մասնագիտությունների ցանկը՝ համապատասխանեցվելով դրանք աշխատաշուկայի եւ Սյունիքի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին:

Վերջին տարիներին քոլեջում (Գորիսի պրոֆտեխուսումնարանը 1990-ականներին փակվելուց հետո) վերականգնվում են նախնական մասնագիտական (արհեստագործական) մասնագիտությունները. այնտեղ ուսուցանվող 12 մասնագիտությունից 5-ը նախնական մասնագիտական է (արհեստագործական): Դա կոնկրետ աջակցություն է ազգային-ավանդական մի շարք արհեստների պահպանման ու զարգացման գործին, մանավանդ որ Գորիսն այդ առումով միշտ էլ ունեցել է յուրահատուկ ավանդույթներ:

Մենք տեղյակ ենք, որ Գորիսի պետական քոլեջը նաեւ բազում խնդիրներ ունի, հատկապես շենքի պահպանման, ուսումնանյութական բազայի հարստացման ուղղությամբ: Անցած տարիներին այդ հարցերը մեր ուշադրության կենտրոնում են եղել, եւ դրանց մի մասն արդեն իսկ լուծում է ստացել՝ տանիքի հիմնանորոգում, շենքի մասնակի նորոգում եւ հրետակոծության հետեւանքների վերացում, քոլեջի մերձակայքով անցնող երկու՝ Սեւյան ու Հայկազունիների փողոցների վերջնամասի հիմնանորոգում եւ այլն:

Առկա հարցերը, անշուշտ, լինելու են մեր ուշադրության կենտրոնում: Եվ, այդ ամենով հանդերձ, համոզված եմ, որ քոլեջն այսուհետ եւս պահպանելու է իր հմայքը, որ նրա երթն անկասելի է լինելու, եւ մոտ 90-ամյա փառքը ոչ մի դեպքում չի եղծվելու կամ խամրելու:

Հաջողություն քոլեջի դասախոսական բազմավաստակ կոլեկտիվին եւ ուսանողությանը, նաեւ հանրակրթական դպրոցների բարձր դասարանցիներին, ովքեր որոշել են կրթությունը շարունակել Գորիսի պետական քոլեջում: ■

ՄԱՆՈՒԿ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀՀ կրթության եւ գիտության նախարարի տեղակալ

Ուրախ եմ, որ առիթ է առաջացել խոսելու Գորիսի պետական քոլեջի՝ մեր հանրապետության միջին մասնագիտական հնագույն կրթական հաստատություններից մեկի մասին:

Հիմնադրվելով 1920-ականներին՝ կրթական այդ հաստատությունն ի սկզբանե ազգային մեծ խնդրի լուծման մասնակից դարձավ՝ պատրաստելով կադրեր հանրակրթական դպրոցների, նաեւ մշակույթի, կառավարման համակարգի եւ հանրային ու պետական կյանքի մյուս ոլորտների համար:

Կրթօջախի հիմնադրումը, ժամանակային առումով, տարածաշրջանում հաջորդում է Շուշիի ռեալական ուսումնարանի փակմանը: Ահա թե ինչու Գորիսի մանկավարժական տեխնիկումն ի սկզբանե առաքելություն ուներ ոչ միայն Սյունիքի ու Վայոց ձորի շրջաններում, այլեւ՝ Լեռնային Ղարաբաղում:

Այսօր կարող ենք ասել, որ Գորիսի մանկավարժական տեխնիկումը՝ Հայաստանի հարավարեւելյան հատվածի անդրանիկ ուսումնարանը, պատասխանատվությամբ եւ արժանապատվորեն կատարեց պատմական իր առաքելությունը:

Այդ հաստատությունում կրթություն ստացան մարդիկ, ովքեր հետագայում ճանաչվեցին ամբողջ հանրապետությունում եւ ինչ-որ իմաստով ճանաչում բերեցին մեր ժողովրդին ու ներդրում ունեցան հայրենական գիտության, մշակույթի ոլորտներում՝ արձակագիրներ Սերո Խանզադյան, Սուրեն Այվազյան, ակադեմիկոս Վահան Ղազարյան, գիտությունների տասնյակ դոկտոր-պրոֆեսորներ…

Ժամանակները փոխվել են, փոխվել են նաեւ կրթօջախի առջեւ ծառացած խնդիրները, այլ չափանիշներ են դրվել աճող սերնդի կրթության ու դաստիարակության, մասնագետների պատրաստման հիմքում:

Կարեւոր ու համարձակ քայլ էր 2012 թվականից սկսած, միջին մասնագիտական կրթական ծրագրերի հետ մեկտեղ, նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրերի ներդրումը: Արհեստների քաղաքի համբավ ունեցող Գորիսում եւ ամբողջ տարածաշրջանում, տեղի պրոֆտեխուսումնարանը 1990-ականներին փակվելուց հետո, ոչ մի կրթօջախում արհեստագործական ծրագրեր չէին իրականացվում: Այդ բացը լրացնելու առաքելությունը ստանձնեց Գորիսի պետական քոլեջը:

ՀՀ կրթության եւ գիտության նախարարությունում տեղյակ են նաեւ խնդիրներին, դժվարություններին, որոնք ծառացած են այդ ուսումնական հաստատության առջեւ:

Նախարարությունն այսուհետ եւս ուշադրության կենտրոնում է պահելու այդ խնդիրներն ու դժվարությունները, այսուհետ եւս դրական է արձագանքելու քոլեջի ղեկավարության ողջամիտ առաջարկություններին, նախաձեռնություններին եւ հնարավորն անելու է, որ միջին մասնագիտական եւ արհեստագործական կրթական ծրագրերի իրականացումն առավել արդյունավետ լինի, որ Գորիսի պետական քոլեջը պատրաստի տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կադրեր:

Գորիսի պետական քոլեջին՝ նոր հաջողություններ եւ արգասաբեր ընթացք: ■

ՎԱՉԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ

Գորիսի քաղաքապետ

Յուրաքանչյուր քաղաքի դեմքն ամբողջանում է իր կրթամշակութային հաստատություններով, ազգին ու մարդկությանը տված արժանավոր մարդկանցով: Վստահ կարող ենք ասել, որ Գորիսը միշտ էլ առանձնացել է ուսյալ, կրթությունը գնահատող մարդկանցով, որի վկան մեր քաղաքի բարի ավանդույթները կրող ու պահպանող ուսումնական հաստատություններից մեկն է՝ Գորիսի պետական քոլեջը:

Անցնելով երկար եւ բեղմնավոր ուղի՝ Գորիսի պետական քոլեջը վաստակել է հանրության սերն ու վստահությունը, նրա ջերմ գրկում են իրենց մասնագիտական ունակությունները ստացել ու կայացել անվանի մարդիկ՝ Սերո Խանզադյան, Սուրեն Այվազյան, Ալեքսանդր Մարգարյան, Աշոտ Հարությունյան, Նինա Հովսեփյան…

Լինելով մեր հանրապետության հարավային հատվածում՝ այն ունեցել է եւ ունի նաեւ ռազմավարական մեծ նշանակություն՝ ապահովելով տարածաշրջանի երիտասարդների կրթությունը. քոլեջը կանխում է նրանց արտահոսքը, ամուր պահում հայրենի հողի հետ կապը:

Լիահույս եմ, որ մեր քաղաքի լուսավոր ապագան մեծ չափով կապված է նաեւ Գորիսի պետական քոլեջի եւ նրա կրթած ու դաստիարակած սերունդների հետ: Իսկ ժողովրդի համար մեծ փորձության՝ ապրիլյան օրերին Գորիսի պետական քոլեջը մեկ անգամ եւս ապացուցեց իր նվիրվածությունը, որ կանգնած է սահմանում գտնվող զինվորի կողքին, պատրաստ է յուրաքանչյուր դժվարության ժամանակ նեցուկ լինել նրան:

Ցանկանում եմ, որ Գորիսի պետական քոլեջն իր նվիրական գործունեությունը շարունակի խաղաղ ու բարեկեցիկ ժամանակներում եւ բազում առիթներ ունենա հպարտանալու իր ուսանողներով, գիտության երախտավորներով: ■

ՄԱԿԱՐ ՎԱՐԴԱՊԵՏ ՀԱԿՈԲՅԱՆ

Հայ առաքելական եկեղեցու Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ

Դարեր շարունակ նախախնամությամբ հրամցված դաժանագույն արհավիրքներից մեր մի բուռ ազգն առասպելական փյունիկ թռչունի պես հառնել է հենց գիտության եւ ամուր հավատի շնորհիվ: Գիտակրթական առումով իր ուրույն եւ անուրանալի մասնաբաժինն ունի նաեւ գիտության ու լուսավորության նվիրյալ բազում հայորդիների ծննդավայր Սյունյաց աշխարհը, որտեղ շուրջ հինը տասնամյակ իր կրթական-լուսավորական փառավոր ուղին է անցնում գիտական մի օջախ, որ ներկայումս կրում է «Գորիսի պետական քոլեջ» անվանումը:

Պր-ն Լազարյան, Դուք եւ Ձեր տնօրինած ուսումնական հաստատության դասախոսական անձնակազմը լծվել եք սերունդների կրթության եւ դաստիարակության սուրբ ու նվիրական գործին, ինչն այնքան անհրաժեշտ եւ հրատապ է հակամարտություններով լի մեր ժամանակաշրջանում: Ուստի թող օրհնյալ լինի «Գորիսի պետական քոլեջ» կրթօջախի ուղին՝ լի նորանոր հաջողություններով եւ ձեռքբերումներով: ■

Ժամանակի օվկիանում՝ առանց նավաբեկության

ԱԼՎԱՐԴ ՄԵՍՐՈՊՅԱՆ

Կարծես հայրական օջախում եմ, հարազատ ու ջերմ մթնոլորտում: Միջանցքներում քայլում են գեղեցիկ, խոհեմ հայացքներով աղջիկներ ու տղաներ: Մեկ աջ եմ նայում, մեկ՝ ձախ: Փնտրտուքի մեջ եմ: Ում եմ փնտրում, ինքս էլ չգիտեմ: Բայց որ փնտրում եմ, դա հաստատ է: Վերջապես իմացա փնտրտուքիս իմաստը. իմ կուրսեցիներին, ուսուցիչներին եմ փնտրում: Այս աղջիկների ու տղաների մեջ ասես ուզում եմ տեսնել կուրսեցիներիս: Ու... ինձ համար հայտնագործություն եմ անում. քոլեջի «գենը» չի փոխվել, «գենը» մնացել է նույնը՝ այստեղ էլի գեղեցիկ աղջիկներ ու տղաներ են սովորում: Հուշերս փոթորկվել են, տարիների վարագույրն եմ ուզում հետ քաշել, տեսնել իմ ժամանակները՝ ուսումնատենչ, հայրենասեր իմ ժամանակակիցներին՝ իմ կուրսեցիներին: Այդ պահին երաժշտության ձայն եմ լսում: Գնում եմ ձայնին ընդառաջ: Դահլիճի բեմում այսօրվա աղջիկներն ու տղաներն են: Վերջին փորձն է. 1915-ի Մեծ եղեռնի զոհերի «ձայներն» եմ լսում... Քիչ անց դահլիճը լցվում է ուսանողներով: Սկսվում է Հայոց ցեղասպանության 101-րդ տարելիցին նվիրված միջոցառումը:

Ընդհանրապես, Գորիսի պետական քոլեջում միջոցառումներ շատ են կազմակերպվում, եւ ամեն միջոցառում իր նպատակն ունի, իր մեսիջը: Իսկ այս ազդակոչն ուղղված էր ամբողջ աշխարհին. Հայոց ցեղասպանությունը պետք է բոլոր երկրները ճանաչեն...

Միջոցառումը կազմակերպել են քոլեջի պատմության դասախոս Դավիթ Ջուլհակյանը եւ կազմակերպիչ Քրիստինե Ադամյանը:

Հետո բացում եմ հաջորդ լսարանի դուռը: Մի պահ ինձ թվաց, թե վարսավիրանոցում եմ: Վարսավիրի արտահագուստով աղջիկներն ու տղաներն իրենց գործին են. մեկը մազ է կտրում, մյուսը՝ հարդարում, երրորդն էլ դեռ նոր է սկսում:

– Ավելի ճիշտ չէ՞ր մի վարսավիրի մոտ 1-2 ամիս սովորեիք վարսավիրություն, քան...

Նրանք ինձ են նայում, որ կարելի է այսպես թարգմանել՝ «Ոչ, դրա տեղը մենք էլ գիտենք»:

Ու հետո ասում են, որ նախընտրել են քոլեջում սովորել:

Առօրյա կյանքում բոլոր վարսավիրները չէ, որ ամեն ինչ գիտեն վարսավիրությունից՝ սկսած մազերի խնամքից, սանրվածքի ձեւերից: Մարդուն տեսնելով՝ մենք արդեն գիտենք, թե նա որ վարսավիրի մոտ է եղել: Շատերը բոլորին նույն սանրվածքն են տալիս՝ առանց հաշվի առնելու մարդու դեմքի ձեւը, տարիքը:

Ու ես նրանց հարցնում եմ՝ինձ ինչպիսի՞ սանրվածք հարմար կլիներ:

Մեկը մյուսին հերթ չտալով՝ Ինան, Լիանան, մյուսները, նաեւ տղաներն ինձ հարմար սանրվածքի ձեւ են առաջարկում: Թե ինչու հատկապես այդ սանրվածքը, նրանք բացատրում են: Եվ այդ ամենը հստակ, համոզիչ փաստարկներով: Ու քիչ է մնում նստես աթոռին...

Լսարանում ամեն ինչ կա վարսավիրություն սովորելու համար: Լսարանը տրամադրող է՝ կահավորված ինչպես առաջնակարգ վարսավիրանոցները: Եվ քոլեջն ավարտելով՝ այս տղաներն ու աղջիկները վաղը, մյուս օրը հմուտ վարսավիրների հետ ոտք են գցելու:

* * *

Հաջորդ լսարանում էլ ապագա խոհարարներն են՝ ճերմակ գլխարկներով ու գոգնոցներով: Սեղան-աթոռներ, սառնարան, գազօջախ, դանակներ, համեմունքներ, մթերք՝ ձուկ, հավի միս, ծնեբեկ, հազարաթերթիկ եւ այլն: Մեկը ձուկն է մշակում՝ պիտի խաշեն, համեմունքները լրիվ ընտրված-պատրաստ են: Մյուսն էլ խաչապուրու խմորն է գրտնակում, երրորդն էլ ծնեբեկն է կտրատում՝ տապակելու համար: Արեւիկ Տատինցյանը թե՝ մենք այստեղ համով-հոտով ուտեստներ պատրաստելու «գաղտնիքն» ենք սովորում: Ճիշտ է, մեր տներում էլ ենք պատրաստում, բայց այստեղ ավելի մեծ հնարավորություն ունենք խոհարարի մասնագիտության մեջ խորանալու: Գորիսի պետական քոլեջի ուսանողները նաեւ Ղարաբաղի համով-հոտով ժենգյալով հաց են պատրաստում:

Ժենգյալով հացն արցախյան խոհանոցի ամենահայտնի ուտեստներից է. դա ժենգյալով, այսինքն՝ ամենատարբեր կանաչեղենով լցոնված հաց է: ԼՂՀ-ից բացի այն ոչ պակաս հայտնի է նաեւ Կապանում ու Գորիսում:

– Այնպես որ, – ասես իբրեւ եզրափակիչ խոսք,– տվյալ ուտեստի ոչ միայն պատրաստումն ենք սովորում այստեղ, այլեւ դրա պատմությունը:

Հետո բարձրահասակ Լազր Համբարձումյանը, ում, ի դեպ, շատ էր սազում խոհարարի համազգեստը, ու նաեւ մյուսները, նշում են, որ խոհարարությունն արվեստ է, այս գործում ոչ մի մանրուք չպետք է անտեսել: Շնորհիվ վարպետ Գայանե Վարդանյանի, ուսանողները շատ բան են սովորում այստեղ: Իսկ քոլեջի տնօրենության շնորհիվ լրիվ կահավորվել է խոհարարների «լսարանը»: 10 մլն դրամ է ներդրվել այստեղ՝ ժամանակակից ձեւով նորոգելու, սարքավորումներ ձեռք բերելու համար:

Ի դեպ, «Խոհարարական գործ» բաժնի տղաներից մեկը զորակոչվել եւ հայոց բանակում խոհարար է: Իսկ ուսանող Արթուր Ալխասյանն արդեն պահանջված է՝ աշխատում է Գորիսի ռեստորաններից մեկում: Այսինքն, ե՛ւ աշխատում է, ե՛ւ սովորում:

* * *

Հյուսն-ատաղձագործները եւս կարեւորում են քոլեջում ստացած գիտելիքների դերը: Այն, ինչ նրանք սովորում են կրթօջախում, ոչ մի վարպետ չի սովորեցնի կյանքում: Այստեղ գիտելիքը տրվում է մատչելի լեզվով, իսկ ստացած գիտելիքները գործնականում կիրառելու համար ամեն ինչ կա:

Հովհաննես Գեւորգյանը եկել է Քաշաթաղի շրջանի Բերձոր քաղաքից: Ուսումն ավարտելուց հետո վերադառնալու է Բերձոր, գործիքներ է գնելու եւ սկսելու աշխատել սովորած մասնագիտությամբ: Իսկ դրա կարիքը Բերձորում կա: Արամ Բաղդասարյանն էլ Գորիսից է: Այս մասնագիտությամբ ընտանիքը պահելու հետ մեկտեղ, նա կարեւոր է համարում հյուսն-ատաղձագործի մասնագիտությունը նաեւ մեկ այլ տեսանկյունից՝ տան տղամարդը պիտի ամեն ինչ իմանա: Հետո էլ ասում են, որ ուստան, այսինքն վարպետը, մինչեւ կեսօր է սոված մնում... Ասել է թե՝ վարպետի համար միշտ էլ գործ կա, ընտանիքը երբեք սոված չի մնա:

Տղաներն այստեղ սովորում են պատրաստել սեղան-աթոռներ, տարբեր չափերի մահճակալներ, այլ իրեր: Ընդ որում՝ մահճակալները հետաքրքիր դիզայն ունեն, դրանք զարդանախշ են:

Հյուսն-ատաղձագործները կարող են նաեւ պատվերներ ընդունել, կարող են մանկապարտեզների համար սեղան-աթոռներ պատրաստել:

Այնպես որ տղաների ձեռքերը կարող են հրաշքներ արարել՝ շնորհիվ քոլեջում ստացած գիտելիքների:

* * *

ԼՈՒՍԱՆԿԱՐ՝ ՄԵԼԻՔ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ

Ուսումնական խոհանոցում

ԼՈՒՍԱՆԿԱՐ՝ ՄԵԼԻՔ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ

Քիմիայի եւ ֆիզիկայի լաբորատորիայում

«Համակարգիչների շահագործում» բաժնում ուսանողները սովորում են մեկ տարի: Դասախոսը՝ Սերգեյ Ավանեսյանը, մանրամասը ներկայացնում է օրվա դասը: Իսկ դա ուսանողներին հնարավորություն է տալիս ճիշտ աշխատել համակարգչով, արագորեն տիրապետել համակարգչային ծրագրերին, եւ նույնիսկ՝ թե ինչ հեռավորության վրա նստել համակարգչի առջեւ...

Ուսանողներն ուշադիր լսում են դասախոսին, աշխատում բաց չթողնել նրա եւ ոչ մի բառը, չէ՞ որ համակարգիչը դարձել է մեր կյանքի մի մասնիկը: Առանց դրա մարդը հիմա իրեն պատկերացնում է անմարդաբնակ կղզում: Ուսանողներն ասում են, որ քոլեջում հետաքրքիր եւ դյուրին են սովորեցնում համակարգչային ծրագրերը: Այստեղ ստացած գիտելիքները հնարավորություն կտան լավ իմանալ համակարգչի «լեզուն»:

Սրբուհի Ակլունցն ավարտել է քոլեջի

էջ 7

ԼՈՒՍԱՆԿԱՐ՝ ՄԵԼԻՔ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ

Համակարգչային լսարանում

ԼՈՒՍԱՆԿԱՐ՝ ՄԵԼԻՔ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ

Ուսանողների պրակտիկան՝ «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում

ԼՈՒՍԱՆԿԱՐ՝ ՄԵԼԻՔ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ

Գեղեցկության ուսումնական սրահում

ԿԱՐԵՆ ԼԱԶԱՐՅԱՆ. «Ուսանելու եկեք Գորիսի պետական քոլեջ եւ կստանաք հիմնավոր գիտելիքներ ու պահանջված կլինեք աշխատաշուկայում»

Էջ 1 բարձական գործ եւ Դիզայն:

– Իսկ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրերո՞վ:

– Համակարգիչների շահագործում, Վարսավիրական արվեստ եւ զարդային դիմահարդարում, Ատաղձագործական, մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքներ, Խոհարարական գործ, Գեղանկարչություն եւ քանդակագործություն, Կարի արտադրության տեխնոլոգիա:

– Թվարկված մասնագիտությունների մեջ ո՞րն է նորն առաջիկա ուսումնական տարվա կրթական ծրագրերում:

– Նորություն ունենք նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրերում՝ Գեղանկարչություն եւ քանդակագործություն մասնագիտությունը, որակավորումը՝ փորագրող՝ քարե գեղարվեստական իրերի:

– Ինչպես տեսնում ենք՝ ի սկզբանե մանկավարժական կոչվող ուսումնարանում այլեւս մանկավարժական կադրեր չեք պատրաստում:

– Տասնամյակներ շարունակ քոլեջում ուսուցանվող մասնագիտությունների գերակշռող մասը, իրոք, ունեցել է մանկավարժական ուղղվածություն: Վերջին տարիներին, սակայն, կրթական բարեփոխումների եւ օպտիմալացման քաղաքականության հետեւանքով, ինչպես վկայում են վիճակագրական տվյալները, նվազել է միջին մասնագիտական կրթությամբ կադրերի պահանջարկն անգամ հեռավոր, լեռնային, սահմանամերձ համայնքներում: Այդ երեւույթը շարունակվելու միտում ունի: Դա է պատճառը, որ արդեն մի քանի տարի է՝ վերցրել ենք մանկավարժական մասնագիտությունների ուսուցումից հրաժարվելու կուրս: Օրենքի պահանջ էլ կա՝ հանրակրթական դպրոցում ուսուցչական գործն այլեւս վերապահվում է բարձրագույն կրթությամբ մասնագետին: Այդ դրույթը բխում է ««Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքից (6 հոկտեմբերի 2011թ.): Ըստ «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին կետի՝ «Ուսումնական հաստատության ուսուցիչ կարող է լինել այն անձը, որը ստացել է մանկավարժական համապատասխան որակավորում (բակալավրի, մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճանով) կամ ունի բարձրագույն կրթություն… »: Նույն օրենքի համաձայն՝ ուսուցչին ներկայացվող այդ պահանջներն ուժի մեջ կմտնեն 2018թ. օգոստոսի 20-ից:

– Մենք մասնակցում էինք Սյունիքի մարզի կրթության աշխատողների 2015թ. օգոստոսյան համաժողովին: Դուք ելույթ ունեցաք եւ մի քանի խնդիր բարձրացրիք: Դրանցից մեկը տպավորվել է մեր հիշողության մեջ, ահա թե ինչ էիք ասում. «Տարիներ շարունակ... Գորիսի պետական քոլեջը պատրաստել է կադրեր «Քույրական գործ», «Մանկաբարձական գործ» մասնագիտություններով»: Հիմա նման մասնագիտությամբ կրթություն ստանալու համար մեր տարածաշրջանի շրջանավարտները պետք է մեկնեն Երեւան կամ այլ քաղաքներ: Եվ դա այն դեպքում, երբ Գորիսի պետական քոլեջն իր ուսումնական բազայով, դասախոսական անձնակազմով, արտադրական պրակտիկայի հնարավորություններով չի զիջում հանրապետության որեւէ բժշկական ուսումնական արտոնագրեր, մանավանդ որ շատ-շատ ընտանիքների սոցիալական վիճակը թույլ չի տալիս, որ իրենց երեխան միջին մասնագիտական կրթություն ստանա Գորիսից դուրս»: Ի՞նչ ընթացք ստացավ այդ խնդիրը:

– Նախ՝ այսօր էլ այդ խնդիրը կա, եւ հրատապ եմ համարում: Երկրորդ, խնդիրը բարձրացվել է ՀՀ կրթության եւ գիտության նախարարության, ինչպես նաեւ Սյունիքի մարզպետարանի առջեւ՝ քննարկելու եւ լուծում տալու ակնկալիքով: Ողջամիտ որեւէ խոչընդոտ չեմ տեսնում եւ հույս ունեմ, որ 2016-17 ուսումնական տարվա համար նշված մասնագիտությունների գծով կկատարվի ընդունելություն:

– Ձեր ասածից հետեւում է, որ մեր ժամանակներում առանցքային նշանակություն ունի ուսուցանվող մասնագիտությունների հիմնավոր ընտրությունը:

– Ճիշտ եք բնութագրում՝ այդ հարցն առանցքային նշանակություն ունի յուրաքանչյուր բուհի, միջին մասնագիտական եւ արհեստագործական ուսումնական հաստատության համար:

Հարցն ուղղակիորեն փոխկապակցված է աշխատաշուկայի, Սյունիքի մարզի եւ հատկապես Գորիսի տարածաշրջանի սոցիալ-տնտեսական, հոգեւոր-մշակութային զարգացման հետ: Բայց երկարաժամկետ ծրագրեր այդ առումով չենք կարող մշակել՝ նկատի ունենալով աշխատաշուկայի պահանջարկի հնարավոր փոփոխությունները, տնտեսության դիվերսիֆիկացիան: Փոխարենը հստակ նախանշել ենք առաջիկա մեկ-երկու տարում ներդրվելիք մասնագիտությունների ցանկը:

Մի կարեւոր հանգամանք էլ կա. նոր մասնագիտությունների ներդրումն ամենեւին էլ մեխանիկական գործընթաց չէ: Ամեն մի նոր մասնագիտություն ներդնելու համար անհրաժեշտ են կադրերի պատրաստում, վերապատրաստում, համապատասխան ուսումնանյութական բազայի ստեղծում եւ այլն: Մի խոսքով՝ դա լուրջ ջանքեր եւ միջոցներ է պահանջում:

– Իսկ ի՞նչ կասեք լրացուցիչ կրթության (ուսուցման) եւ ոչ ֆորմալ կրթության (ուսուցման) իրականացման վերաբերյալ, արդյո՞ք քոլեջի հնարավորությունները ռացիոնալ են օգտագործվում այդ նպատակով:

– Լրացուցիչ կրթության (ուսուցման) եւ ոչ ֆորմալ կրթության (ուսուցման) իրականացման հնարավորություններն ու պահանջարկը Գորիսի տարածաշրջանում առայժմ ուսումնասիրված են ոչ բավարար:

Կարճաժամկետ ուսումնական ծրագրերի իրականացման համար որոշակի հնարավորություններ ունեն ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության զբաղվածության տարածքային կենտրոնները: Նկատի ունենք մասնավորապես թափուր եւ նոր աշխատատեղերի համար մասնագետների վերապատրաստումն ու ուսուցումը:

Երկու-երեք ամիս տեւողությամբ կրթական այդ ծրագրերը, որքան էլ զարմանալի է, Գորիսի տարածաշրջանում տարիներ շարունակ իրագործում էին ինչ-որ հկ-ներ կամ ՍՊԸ-ներ: Եվ եթե մինչեւ վերջերս այդ հարցը կարգավորված չէր, ապա 2015թ. սեպտեմբերի 10-ին ՀՀ կառավարությունն ընդունել է որոշում «Լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման եւ իրականացման կարգի մասին», որի համաձայն միջին մասնագիտական եւ արհեստագործական ուսումնական հաստատություններն ավելի շատ հնարավորություն ունեն ընդգրկվելու զբաղվածության կենտրոնների ծրագրերի իրականացման գործում: Այնպես որ՝ անելիքներ ունենք այդ ուղղությամբ:

– Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտներն ունեն մի արտոնություն, որի մասին քչերն են տեղյակ, խոսքը շարունակական կրթության հնարավորության մասին է:

– Իրոք, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտներն իրավունք ունեն կրթությունը շարունակել բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ համապատասխան մասնագիտության երկրորդ կուրսում՝ հեռակա ուսուցմամբ: Խնդիրը հստակեցվել է ՀՀ կառավարության 2015թ. հուլիսի 8-ի N752-Ն որոշմամբ: Խնդրեմ, կարող եք ծանոթանալ այդ որոշման հավելվածին՝ «Կարգ՝ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու»: Վերջին տարիներին այդ հնարավորությունից օգտվել է քոլեջի 21 շրջանավարտ: Եվ հինգ հոգի, ովքեր քոլեջը կավարտեն այս տարի, պատրաստվում են նույն կերպ ուսումը շարունակել բարձրագույն ուսումնական հաստատությունում:

– Գորիսի պետական քոլեջում, փաստորեն, միջին մասնագիտական կրթական ծրագրերի հետ մեկտեղ իրականացվում են նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր:

– Քիչ առաջ ասացի, թե արհեստագործական կրթական ծրագրերով ինչ մասնագիտություններ են ուսուցանվում մեզ մոտ:

Արհեստագործական կրթական ծրագրերի ներդրումը, հավատացեք, իրադարձություն էր Գորիսի տարածաշրջանում:

1990-ականներին փակվել էր Գորիսի պրոֆտեխուսումնարանը, եւ արհեստների քաղաքի համբավ ունեցող Գորիսում ոչ մի տեղ արհեստավոր չէին պատրաստում:

Մենք համարձակորեն գնացինք այդ խնդիրը լուծելու ճանապարհով: 2012 թվականից ներդրվեցին կրթական այդպիսի ծրագրեր, որը, ինչպես եւ ակնկալվում էր, պատշաճ արձագանք ունեցավ: Չորս տարում (2012-2015թթ.) ունեցանք 248 դիմորդ արհեստագործական մասնագիտությունների գծով:

Ուզում եմ նաեւ տեղյակ լինեք՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) ծրագրերի զգալի մասն իրականացվում է պետական պատվերով: Ավելի պարզ արտահայտվեմ՝ ուսանողի համար արհեստագործական բաժնում սովորելը մեծամասամբ անվճար է, իսկ անվճար սովորողները նաեւ պետական կրթաթոշակ են ստանում:

Արհեստագործական բաժնի ստեղծումով նաեւ մոտ տասը դրույքի չափով աշխատատեղ է ավելացել մեզ մոտ, այսինքն՝ աշխատող դասախոսների բեռնվածությունն է ինչ-որ չափով կարգավորվել:

– Կրթական ծրագրերի հետ կապված մի հարց եւս, որ չենք կարող շրջանցել. որքանո՞վ են քոլեջում իրականացվում հանրակրթական ծրագրեր: Մեր հարցի ենթատեքստը, կարծում ենք, պարզ է. երեխան ավարտել է 9-րդ դասարանը (հիմնական դպրոցը) եւ ուզում է միաժամանակ ե՛ւ մասնագիտություն սովորել, ե՛ւ հանրակրթական միջնակարգ դպրոցի շրջանավարտի կարգավիճակ ունենալ:

– «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում 2015թ. ապրիլի 8-ին կատարված փոփոխությամբ 2017թ. հունիսի 1-ից Հայաստանի Հանրապետությունում պարտադիր է միջնակարգ կրթությունը:

Գործող օրենսդրությամբ՝ հանրակրթական հիմնական ծրագրերը, հանրակրթական ուսումնական հաստատություններից բացի, իրականացվում են նաեւ մասնագիտական ուսումնական հաստատություններում:

Միջին մասնագիտական ու-

ԱՅՑԵԱՐԱՏ

Կարեն Սամվելի Լազարյան. ծնվել է 1979թ. նոյեմբերի 7-ին Գորիս քաղաքում: Գորիսի N3 միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո 1996թ. ընդունվել է ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ, որն ավարտել է 2000 թվականին՝ ստանալով ֆիզիկական կուլտուրայի դասատուի եւ աթլետիկայի մարզչի որակավորում:
Այնուհետեւ զորակոչվել է բանակ եւ 2000-2002թթ. ծառայել Արմավիրում, Վայքում ու Խաչիկում (պահեստազորի լեյտենանտ է):
Զորացրվելուց մեկ տարի անց, որպես ֆիզիկական կուլտուրայի դասախոս, աշխատանքի է անցել «Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում:
2009թ. ապրիլի 14-ին մրցույթով ընտրվել է նույն քոլեջի տնօրեն, վերընտրվել 2015թ. հոկտեմբերի 8-ին:
Աշխատանքին զուգահեռ 2010-15թթ. սովորել է Գորիսի պետական համալսարանի պատմահրավագիտական ֆակուլտետի իրավագիտություն բաժնում՝ ստանալով ուսուցչի, մանկավարժության բակալավրի աստիճան՝ «Իրավագիտություն» մասնագիտությամբ:
2015-16 ուսումնական տարվանից, աշխատանքին զուգահեռ, սովորում է Երեւանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետի մագիստրատուրայում:
2008թ. հոկտեմբերի 12-ին ընտրվել է Գորիս քաղաքի ավագանու անդամ:
2014թ. ապրիլի 4-ին ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով պարգեւատրվել է «Գարեգին Նժդեհ» մեդալով, 2015թ. դեկտեմբերի 30-ին՝ պատվոգրով՝ «Մատաղ սերնդի հայրենասիրական դաստիարակության գործում ունեցած մասնագիտական առաջընթացի եւ ներդրած կազմակերպչական աշխատանքների համար»:
2015թ. հունվարի 6-ին՝ Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության օրը, Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Մակար վարդապետ Հակոբյանի առաջարկով, մեկ տարի ժամանակով, ստանձնել է Գորիսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու «Խաչի քավոր»-ի պարտականությունը:
Ամուսնացած է 2006 թվականից, ունի երկու դուստր եւ մեկ որդի:
Անկուսակցական է:

նարանի: Մեր խնդրանքն է՝ վերանայել այդ մոտեցումը, մանավանդ որ Գորիսի պետական քոլեջն ունի համապա-

Սումնական հաստատություններում հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպման հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է՝ դրանից բխող անելիքներով:

Հիմնական դպրոցն ավարտողների մի մասն իր կրթությունը գերադասում է շարունակել նախնական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրերով՝ ստանալով մասնագիտություն եւ ընդհանուր միջնակարգ կրթությունը շարունակելու հնարավորություն:

Ասվածից բխում է Ձեր հարցի պատասխանը՝ այո, հիմնական դպրոցի շրջանավարտը կարող է գալ քոլեջ ու միաժամանակ ստանալ եւ միջնակարգ կրթություն, եւ որեւէ մասնագիտություն:

– Հիմա մեր հանրապետության կրթության ոլորտում, այդ թվում՝ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, համընդհանուր աշխատանք է կատարվում Եվրոպական կրթական տարածքին ինտեգրվելու ուղղությամբ: Ի՞նչ կասեք այդ մասին:

– Հանրապետության նախնական եւ միջին մասնագիտական կրթության ոլորտում իրականացվում են բարեփոխումներ՝ միտված Եվրոպական կրթական տարածքին ինտեգրմանը, որն ուղղորդվում է Թուրինի գործընթացով:

Գործընթացի պահանջներին համապատասխան հանրապետությունում մշակվել են արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչներ, որոնց հիման վրա վերանայվել են ուսումնական ծրագրերը նաեւ Գորիսի պետական քոլեջում:

Այդ առումով, սակայն, անելիքներն ավելի շատ են, քան կատարվածը: Այսինքն՝ կրթության գլոբալ համակարգերին ինտեգրվելը մեր գործունեության կարեւոր ուղղություններից է:

ՄԿՈՒ-ի ոլորտի բարեփոխումների գլխավոր ուղղությունը (ըստ Եվրամիության աջակցության ծրագրի) 12 տարածաշրջանային բազմագործառութային քոլեջները համարելով՝ ինչ-որ չափով տուժում են (կամ ուշադրությունից դուրս են մնում) մյուս քոլեջները: Իրականության հետ գրեթե առնչություն չի կարող ունենալ դրույթը, որ տարածաշրջանային քոլեջները կստանձնեն (կամ արդեն ստանձնած պիտի լինեն) բարեփոխումների առաջնորդի եւ տարածողի առաքելությունը: Համենայնդեպս նախորդ տարիների փորձը դա է վկայում:

Միաժամանակ՝ ՀՀ կրթության եւ գիտության նախարարության համապատասխան կառույցների օգնությամբ կմշակենք հայեցակարգ՝ Գորիսի պետական քոլեջը եվրոպական կրթական տարածքին աստիճանաբար ինտեգրելու վերաբերյալ՝ նկատի ունենալով «ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը»:

– Իսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձինք կարո՞ղ են Գորիսի պետական քոլեջում սովորել:

– «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2.1 մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք»:

Ըստ 2014թ. դեկտեմբերի 1-ին ընդունված «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի լրացումների եւ փոփոխությունների՝ ուսումնական հաստատություններում սովորող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողների ծանրակշիռ մեծամասնությունը մինչեւ 2025թ. իրականացվելիք համընդհանուր ներառման պետական քաղաքականության արդյունքում իր կրթական իրավունքը կիրականացնի ընդհանուր կամ մասնագիտացված հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունում:

Օրենքի այդ պահանջները մենք կատարում ենք եւ ունենք հետագա անելիքների հստակ ծրագրեր: Եվ այսօր արդեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձինք նույնպես կարող են ուսանելու գալ Գորիսի պետական քոլեջ:

– Կրթական ծրագրերի որակյալ իրականացումը, անշուշտ, պահանջում է ե՛ւ կադրերի վերապատրաստում, ե՛ւ ուսումնական պլանների արդիականացում, ե՛ւ մասնագիտությունների չափորոշիչների նորացում:

Կարողանո՞ւմ եք հասնել ժամանակի հետեւից:

– Ուսուցանվող բոլոր մասնագիտությունների համար մշակվել եւ ներդրվել են նոր չափորոշիչներ:

Մասնագիտական կրթության եւ ուսուցման զարգացման ազգային կենտրոնի (ՄԿՈՒԶԱԿ) կողմից մշակվել եւ ներդրվել են չափորոշիչներից բխող ուսումնական պլաններ:

Դասավանդվող առարկաներից 104-ի համար մշակվել եւ ներդրվել են մոդուլային ուսումնական ծրագրեր:

Անձնակազմի եւ հատկապես մանկավարժական կադրերի վերապատրաստումը եղել է ուշադրության կենտրոնում: ԿԳ նախարարության, Կրթության ազգային ինստիտուտի եւ ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից կազմակերպվել է վերապատրաստման ութ դասընթաց: Բավականին արդյունավետ կազմակերպված այդ դասընթացներին պարբերաբար եւ պարտադիր կարգով մասնակցել են տնօրենն ու փոխտնօրենները, դասախոսներն ու վարպետները:

Սրանք աշխատանքներ են, որոնք չեն կարող շարունակական չլինել...

– Ուսուցման արդիական համակարգը ե՛ւ բուհում ու դպրոցում, ե՛ւ միջին մասնագիտական ու նախնական մասնագիտական կրթական հաստատություններում ենթադրում է ուսումնամեթոդական համապատասխան բազա: Կարո՞ղ եք ներկայացնել քոլեջում գործող կաբինետները, լաբորատորիաները եւ արհեստանոցները:

– Ունենք կահավորված երեք կաբինետ (համակարգչային, կենսաբանության եւ անատոմիայի, ռազմագիտության), կահավորված երկու լաբորատորիա՝ ֆիզիկայի եւ քիմիայի, չորս արհեստանոց՝ փայտամշակման, խոհարարական գործի, կարի եւ վարսահարդարության, ինչպես եւ անընդհատ համալրվող գրադարան… Աշխատանքներ են տարվում նոր կաբինետներ, արհեստանոցներ եւ լաբորատորիաներ ստեղծելու ուղղությամբ:

– Մենք բավականին զրուցեցինք կրթությանն առնչվող հարցերի շուրջ, բայց գերխնդիրը, ի վերջո, ժամանակակից անձի եւ քաղաքացու ձեւավորումն է: Կուզենայինք նաեւ այդ մասին լսել:

– Ուսանողի՝ ազգային, բարոյական եւ համամարդկային արժեքների ոգով դաստիարակությանը միտված աշխատանքները մեր գործունեության հիմնական ուղղություններից են:

Երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությանը նպաստելու համար քոլեջում ստեղծվել է ռազմագիտության կաբինետ՝ կահավորված անհրաժեշտ գույքով եւ ցուցավահանակներով: Հանրապետական ու մարզային մասշտաբի միջոցառումների եւ ուսումնասիրությունների ընթացքում կաբինետը քանիցս արժանացել է լավագույնի կոչման: Կաբինետի հնարավորություններն օգտագործվում են ուսանողների ռազմահայրենասիրական դաստիարակության գործում:

Ռազմահայրենասիրական դաստիարակության նպատակով կազմակերպվում են այցելություններ տարածաշրջանում տեղաբաշխված զորամասեր, կազմակերպվում են հանդիպումներ զինվորների ու սպաների, Հայրենական մեծ պատերազմի եւ Արցախյան պատերազմի վետերանների, զոհված ազատամարտիկների ընտանիքների անդամների հետ:

Քոլեջում հետաքրքիր ավանդույթներ կան գեղագիտական դաստիարակության ոլորտում: Ցուցահանդեսները, հիշարժան տարեթվերի նշումը, գեղարվեստական ինքնագործ խմբերի ելույթները, մարզական միջոցառումները տարիների ընթացքում քոլեջին ճանաչում են բերել:

Պարբերաբար կազմակերպվում են հանդիպումներ արվեստի, մշակույթի, գիտության ներկայացուցիչների հետ, ովքեր այցելում են Գորիս:

– Միգուցե անդրադառնանք նաեւ հիմնախնդիրների՞ն:

– Մեր զրույցի ընթացքում արդեն անդրադարձանք որոշ հիմնախնդիրների:

Ասվածին ավելացնեմ հետեւյալը՝ քոլեջի շենքի բակի հիմնանորոգում, մասնավորապես ջրահեռացման համակարգի ստեղծում:

Օրակարգային է շենքի ջեռուցման հարցը. առավել օպտիմալ տարբերակը շենքի գազիֆիկացումն է: Առայժմ շենքը ջեռուցվում է վառելափայտով կամ էլեկտրական սալիկներով:

Առաջնային է շենքի հարկաբաժինների նորոգումը, լսարանները գրավիչ տեսքի բերելը:

Կարեւոր հարց եմ համարում քոլեջի դասախոսական կազմի սոցիալական կարիքների բավարարմանը միտված աշխատանքը:

Քոլեջում աշխատելն ավելի գրավիչ դարձնելուն, օրինակ, կարող է նպաստել սոցիալական փաթեթի շահառուների մեջ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների աշխատակիցներին ընդգրկելը՝ համապատասխան փոփոխություններ կատարելով ՀՀ կառավարության 2012թ. դեկտեմբերի 27-ի N1691-Ն որոշման մեջ: Տարօրինակ է, երբ նախնական մասնագիտական ուսումնական հաստատություններն այդ փաթեթի շահառու են, իսկ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում արհեստագործական կրթական ծրագրեր իրականացնողները՝ ոչ:

– Մեր զրույցն ամբողջական չի լինի, եթե չանդրադառնանք կարեւոր մի հարցի՝ շրջանավարտների աշխատանքի տեղավորման ներկա վիճակին եւ հեռանկարին:

– Իսկապես, պատանիներն ու աղջիկները մասնագիտություն են ստանում, որպեսզի հետագայում կամ շարունակեն կրթությունը, կամ ձեռք բերած մասնագիտությամբ աշխատանք ունենան եւ ընդհանրապես կյանքում իրենց տեղը գտնեն, ինքնադրսեւորվեն:

Անկեղծ լինենք՝ իրավիճակը ոչ սովորական է. բուհերի, միջին մասնագիտական եւ արհեստագործական կրթօջախների լայն ցանց՝ մի կողմից, մյուս կողմից՝ զբաղվածության լրջագույն խնդիր հանրապետությունում:

Եվ նման իրավիճակում մեր շրջանավարտների մոտ 20 տոկոսն է ամեն տարի իր մասնագիտությամբ աշխատանք գտնում, մի մասն էլ աշխատանքի է անցնում ոչ իր մասնագիտությամբ:

Բայց մեզ համար մի ուրիշ չափանիշ էլ կա. արդյո՞ք մեր շրջանավարտները՝ աշխատանք ունեցող, բավարարում են գործատուի մերօրյա պահանջները:

Հաճելիորեն պիտի ասեմ՝ մեր շրջանավարտների արհեստավարժության, հմտության, պրոֆեսիոնալ որակների մասին բազմաթիվ արձագանքներ ունենք ամենատարբեր ոլորտների գործատուներից: Դրանք վկայում են, որ Գորիսի պետական քոլեջի շրջանավարտները հաջողությամբ են կյանքում քննություն բռնում ե՛ւ իրենց մասնագիտական գիտելիքներով, ե՛ւ իրենց քաղաքացիական կերպով:

Վերը նշվածով հանդերձ, շրջանավարտներին մասնագիտական աշխատանքով բավարարելու խնդիրը եղել եւ մնում է օրախնդիր, քանի դեռ մեզանում (ամբողջ հանրապետության մասշտաբով) զբաղվածության խնդիրը հիմնովին չի կարգավորվել:

– Եվ վերջին հարցը, ի՞նչ կուզենայիք ասել հանրակրթական դպրոցների շրջանավարտներին, ովքեր դեռեւս չեն կողմնորոշվել ապագա մասնագիտության ընտրության հարցում:

– Ընդամենը մեկ նախադասություն՝ ուսանելու եկեք Գորիսի պետական քոլեջ եւ կստանաք հիմնավոր գիտելիքներ ու պահանջված կլինեք աշխատաշուկայում:

Ասվածը, հավատացեք, սոսկ խոսք չէ: 2009-2015թթ. տարեկան միջին հաշվով 130 հոգի ընդունելության է եկել քոլեջ, ինչը վկայում է քոլեջի պահանջված եւ նախընտրելի լինելու մասին:

Մի լրացում եւս, որ անպայմանորեն կհետաքրքրի դպրոցի շրջանավարտներին՝ վերջին տարիներին մեր քոլեջում անընդհատ ավելացել են անվճար տեղերը. դա հնարավորություն է տվել, որ սոցիալապես անապահով խավերից ավելի շատ ուսանողներ ընդգրկվեն մասնագիտական եւ արհեստագործական բաժիններում: Այդ իրողությունը շարունակվելու միտում ունի…

Եվ, օգտվելով առիթից, քոլեջի դասախոսական անձնակազմի եւ իմ շնորհակալությունն եմ հայտնում ՀՀ կրթության եւ գիտության նախարարությանը, Սյունիքի մարզպետարանին, Գորիսի քաղաքապետարանին, մեր բոլոր գործընկերներին՝ աջակցության եւ համագործակցության համար: Քոլեջի հաջողությունները նաեւ այդ համագործակցության արդյունք են: Մեր առջեւ ծառացած բազում խնդիրների լուծման գրավականներից մեկն էլ այդ համագործակցությունն է:

Հարցազրույցը՝ ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ

§¶áñÇëÇ å»ï³Ï³Ý ùáÉ»ç¦ ä à²Î-Ç ËáñÑáõñ¹Á

ԱՐԱՐԱՏ ԼԱԼԱԲԵԿՅԱՆ
Խորհրդի նախագահ

ԼԵՒՈՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Խորհրդի նախագահի տեղակալ

ԼՈՒՍԻՆԴԱ ԱՍՐՅԱՆԻ ԱՐԽԻՎԱՅԻՆ ԼՈՒՍԱՆԿԱՐ

ԱՆԺԵԼԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ
Խորհրդի քարտուղար

ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ
ՄԱՐՏԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԱՂԱԲԵԿՅԱՆ
ԱՐԱՄԱՅԻՍ ՓԱՐՍՅԱՆ
ԱՐՄԱՆ ԱՅՎԱԶՅԱՆ
ԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԱՐԱՄ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ԱՆԻ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Սովորելով սովորեցնել

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ՄԵԼԻՔ ԲԱՐԴԱՍԱՐՅԱՆԻ

ՕԼՅԱ ՂՈՒԼՅԱՆ

Գորիսի պետական քոլեջի շրջանավարտ, քոլեջի տեղեկատվական տեխնոլոգիայի դասախոս

Կրթությունը գիտելիքների քանակը չէ, այլ լիակատար ըմբռնումն ու հմուտ կիրառումն այն ամենի, ինչ գիտես:

Կրթահամակարգը փոխվում է, փոխվում են նաեւ կրթության հանդեպ ունեցած պահանջներն ու վերաբերմունքը, փոխվում են չափորոշիչներն ու արժեհամակարգը:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման դարում մարդը դանդաղ առաջընթաց չի կարող ունենալ: Երեւի թե դա է պատճառը, որ ուսումնական որոշ հաստատություններում կարողանում են կարճ ժամանակահատվածում՝ ժամանակին համընթաց, այսօրվա չափորոշիչներին համապատասխան որակյալ մասնագետներ պատրաստել, ովքեր կարճ ժամանակում կարողանում են հասնել այնպիսի արդյունքների, որի մասին կերազեին շատ բուհեր, որովհետեւ նման հաստատությունների նշանաբանն է՝ սովորելով սովորեցնել: Ահա այդպիսի հաստատություն է Գորիսի պետական քոլեջը:

Քոլեջի մասին տեղեկացել էի համացանցի օգնությամբ, նաեւ բազմաթիվ մարդկանցից լսել էի դրական արձագանքներ, ինչն էլ ավելի էր մեծացրել այնտեղ սովորելու իմ ցանկությունը:

2006թ. ավարտելով Խնձորեսկի միջնակարգ դպրոցը, ընդունվել եմ Գորիսի պետական քոլեջի «Հաշվողական տեխնիկայի եւ ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» բաժինը:

Հետագայում քոլեջն ինձ տվեց այն գիտելիքը, որը ես չէի կարող ձեռք բերել ոչ մի այլ կրթօջախում: Առաջին իսկ վայրկյանից ինձ գրավել էր տիրող ջերմ մթնոլորտը, որը ոչ ոքի անտարբեր թողնել չէր կարող: Դրան գումարվել էին նաեւ նյութերի մատուցման որակը, մատչելիությունը:

Ուսանելուս տարիներին ստացել եմ բավականաչափ խորը գիտելիքներ՝ շնորհիվ դասախոսների բարձր մակարդակի եւ բազմամյա փորձի: Ցուցաբերել եմ բարձր առաջադիմություն, ինչի շնորհիվ հնարավորություն եմ ստացել քոլեջի եւ Երեւանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի միջեւ կնքված պայմանագրի համաձայն ուսումս շարունակել նշված համալսարանի «Ինֆորմատիկա եւ կիրառական մաթեմատիկա» մասնագիտության 3-րդ կուրսում:

Քոլեջում ստացած գիտելիքները նպաստել են, որ համալսարանը նույնպես ավարտեմ բարձր առաջադիմությամբ:

2013թ. հնարավորություն եմ ստացել աշխատել իմ հարազատ կրթօջախում՝ Գորիսի պետական քոլեջում:

Գորիսի պետական քոլեջում դասավանդումը կատարվում է ժամանակակից կրթական մեթոդներով, եւ, վստահ եմ, ապագայում նույնպես մեր կրթօջախը կունենա մեծ պահանջարկ:

Իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում տնօրենին՝ պարոն Կարեն Լազարյանին՝ էներգիայով լի մի անձնավորության, ով գործի մարդ է, կրթության գործի իսկական նվիրյալ:

Շնորհակալություն դասախոսներին՝ օգտակար խորհուրդների եւ փորձի փոխանակման համար, ովքեր նույնպես ջանք չեն խնայում իրենց ունեցած գիտելիքը հնարավորինս մատչելի մատուցելու համար: ■

Ծնողի այունակ

ՏԻԳՐԱՆ ԲԵՅԲՈՒԹՅԱՆ

Արդեն հինգ տարի է՝ ապրում եմ Գորիսում: Ունեմ երկու երեխա, որոնք սովորել են Գորիսի Ակ. Բակունցի անվան N1 ավագ դպրոցում: Ներկա պահին որդիս՝ Աղասի Բեյբությանը, որպես կուրսանտ, սովորում է ՌԴ Սարատովի շրջանի Վոլսկ քաղաքի բարձրագույն թիկունքային ակադեմիայում: Իսկ դուստրս՝ Անժելիկա Բեյբությանը, շարունակում է ուսումը Գորիսի պետական քոլեջում:

Անժելիկան դեռ փոքր տարիքում երազել է բժշկի մասնագիտությունը: Հետագայում ուզում է շարունակել ուսումը եւ դառնալ ռազմական բժիշկ՝ շարունակելով իր տոհմի ժառանգական մասնագիտությունը: Դեռ դպրոցում սովորելու ժամանակ իմացել էինք Գորիսի քոլեջի մասին, լսել էինք նրա համբավի եւ լավ մասնագետների առկայության մասին: Հարց ու փորձ անելուց հետո իմացանք տնօրենի՝ Կարեն Լազարյանի մասին՝ խստապահանջ եւ անմիջական անձնավորություն, իմացանք քոլեջի դասախոսների մասին, ովքեր շատ բանիմաց եւ խելացի մասնագետներ են:

Տարիներ են անցել, ու, որպես ծնող, շատ գոհ ենք եւ ուրախ, որ մեր դուստրը քոլեջում սովորում է ոգեւորված... ■

ՍԱՐՄԵՆ ԱԿԼՈՒՆՑ

Քոլեջն ուսումնական այն կենտրոնն է, որտեղ ոչ միայն ուսուցանում են գիտելիքներ, այլեւ զբաղվում են ուսանողների բարոյահոգեբանական դաստիարակությամբ: Իմ երեք աղջիկը՝ Նելլի, Սրբուհի, Օվսաննա Ակլունցները, սովորում են քոլեջի տարբեր բաժիններում, եւ այդ ստացած գիտելիքներով միջնեկ աղջիկս՝ Սրբուհին, իր ուսումը շարունակել է Գորիսի պետական համալսարանում:

Որպես ծնող շատ ուրախ եմ, որ երեխաներս եւ իմ խորհրդով այնտեղ սովորող ուսանողները գտնվում են հուսալի ձեռքերում: Քոլեջի դասապրոցեսներն անցնում են բարձր մակարդակով, քանի որ այն հիմնված է նյութատեխնիկական մեծ բազայի վրա. վերջինս օգնում է սովորողներին՝ ստանալու ավելի կայուն գիտելիքներ:

Շատ ուրախ եմ, որ Գորիսում կա նման հաստատություն, որտեղ կրթվում եւ դաստիարակվում են բազմաթիվ ուսանողներ եւ ստանում կայուն գիտելիքներ: ■

ԿԱՐԻՆԵ ԱԴԱՄՅԱՆ

Չորս երեխայի մայր եմ, մասնագիտությամբ՝ բուժքույր, ապրում եմ Գորիսի Ակներ գյուղում:

Իմ երեք աղջիկներից երկուսն ավարտել են Գորիսի պետական քոլեջը, իսկ երրորդ աղջիկս դեռ սովորում է: Միջնեկ աղջիկս՝ Շուշանիկ Ադամյանը, 2009-2013թթ. սովորել է քոլեջի «Հաշվողական տեխնիկայի եւ ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» բաժնում: Սկզբում վճարովի հիմունքներով, այնուհետեւ, բարձր առաջադիմություն ցուցաբերելու շնորհիվ տեղափոխվեց անվճար համակարգ: 2015թ. նույն ճանապարհը բռնեցին մեծ ու փոքր աղջիկներս: Մեծ աղջիկս՝ Քրիստինա Ադամյանը, չնայած սովորել էր Գորիսի պետական համալսարանի «Պատմա-իրավագիտական» ֆակուլտետի «Պատմություն» բաժնում, ցանկություն հայտնեց սովորել նաեւ քոլեջի «Վարսավիրական արվեստ եւ զարդային դիմահարդարում» մասնագիտությունը:

Քոլեջի տնօրենի առաջարկությամբ 2015թ. սեպտեմբերի 1-ից աշխատում է քոլեջի կազմակերպիչ, իսկ ահա փոքր աղջիկս՝ Անուշ Ադամյանը, անվճար հիմունքներով սովորում է «Քույրական գործ» բաժնում:

Ինչպես յուրաքանչյուր ծնող, այնպես էլ ես խորապես շնորհակալ եմ այն հետեւողական ու մասնագիտական աշխատանքներից, որոնք տարվում են Գորիսի պետական քոլեջում:

Գորիսի պետական քոլեջը կրթական գործընթացում ձգտում է քայլել ժամանակին համընթաց՝ օգտագործելով ուսուցման արդյունավետությունն ապահովող ժամանակակից մեթոդներ, գտնել ուսանողների կրթական մակարդակն առավելագույնս բարձրացնելու ու բազմակողմանի զարգացվածությանը նպաստելու նոր ուղիներ: ■

Չբավարարվել ձեռք բերածով. ահա նշանաբանը, որով առաջնորդվում ենք

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ՄԵԼԻՔ ԲԱՐԴԱՍԱՐՅԱՆԻ

ՕԼԳԱ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Գորիսի պետական քոլեջի ուսանողական խորհրդի անդամ

Գորիսի պետական քոլեջի ուսանողական խորհուրդը կրթօջախի ուսանողության ներկայացուցչական, ինքնակառավարման եւ նրա շահերը պաշտպանող ու ներկայացնող մարմին է: Նպաստում է քոլեջի ուսանողության կրթական, գիտական, ստեղծագործական, ֆիզիկական, բարոյական եւ հոգեւոր զարգացմանը: Ուսանողական խորհրդի գործունեության հիմնական առաքելությունն է՝ համախմբել քոլեջի ուսանողությանը, աջակցել եւ մասնակցել քոլեջի գործունեությանը ու ուսումնական գործընթացի բարեփոխումներին, ինչպես նաեւ նպաստել ուսանողության մեջ քաղաքացիական հասարակության ձեւավորմանը, ազգային եւ քոլեջային ավանդույթների պահպանմանը:

Քոլեջի ՈՒԽ-ի կառավարման բարձրագույն մարմինն ընդհանուր ժողովն է, որն ընտրվում է երկու տարի ժամկետով՝ ուսանողների մասնակի շրջափոխության սկզբունքով: Ընդհանուր ժողովի անդամները (լիազոր ներկայացուցիչները) ընտրվում են բոլոր բաժինների ուսանողներից՝ ըստ համամասնության՝ յուրաքանչյուր բաժնից 1-10 ներկայացուցիչ:

Քոլեջի ՈՒԽ նախագահությանն անդամ են հանդիսանում ի պաշտոնե ՈՒԽ նախագահը, փոխնախագահը, քարտուղարը եւ մշտական հանձնաժողովների պատասխանատուները:

ՈՒԽ մշտական հանձնաժողովներն են՝ կազմակերպչական եւ մշակույթի, կրթության, ուսուցման եւ սպորտի, արտաքին կապերի, սոցիալական ցանցերի հետ համագործակցության:

Պարբերաբար հրավիրվում է ՈՒԽ-ի ժողով, որտեղ քննարկվում են տարբեր հարցեր. դրանք վերաբերում են ինչպես ընթացիկ աշխատանքներին, այնպես էլ անելիքներին:

Հաճախակի կազմակերպվում են կինոդիտում-քննարկումներ, բանավեճեր տարբեր հարցերի շուրջ, սպորտային մրցույթներ…

ՈՒԽ-ն ակտիվ գործում է ոչ միայն քոլեջի ներսում, այլեւ նրա սահմաններից դուրս: Օրինակ՝ 2015թ. մայիսի 12-ին Գորիսի պետական համալսարանում տեղի ունեցավ Հայաստանի երիտասարդական հիմնադրամի Սյունիքի մարզային կենտրոնի կողմից կազմակերպված ինտելեկտուալ ազգային խաղ-մրցույթ՝ «Ինքնաճանաչումը միասնականության գրավական» խորագրով: Վերջինս իր մեջ ներառում էր այնպիսի հարցեր, որոնք վերաբերում էին հայ ազգային հերոսներին եւ հայ մարտիկներին (որոնց գործունեությունը եւ սխրանքները մեծ ազդեցություն են ունեցել Հայաստանի սահմանների պաշտպանության, հայոց պետականության պահպանման ու ամրապնդման գործում), հայ ազգային պարերին եւ երգերին, ինչպես նաեւ եկեղեցական տոներին: Խաղ-մրցույթին մասնակցում էին հինգ թիմ՝ Գորիսի պետական քոլեջ, Գորիսի պետական համալսարան, Ջինիշյան հիշատակի հիմնադրամ, Գորիսի երիտասարդական միություն, ԵԹԿՊԻ Գորիսի մասնաճյուղ:

Խաղ-մրցույթն անցկացվեց չորս փուլով եւ արդյունքների ամփոփումով պարզ դարձավ հաղթող թիմի անունը՝ Գորիսի պետական քոլեջ:

2015թ. հոկտեմբերի 2-4-ը Գորիսի պետական քոլեջի ՈՒԽ-ը եւս մասնակցեց Երեւանում տեղի ունեցած Երիտասարդական ակումբների դաշնության 5-րդ համաժողովին: Քոլեջը տարածաշրջանի միակ ուսումնական հաստատությունն էր, որը ներկայացրեց կրթօջախի անցած պատմական ուղին, ձեռքբերումները եւ ՈՒԽ-ի գործունեությունը: Համաժողովի նպատակն էր՝ ՀՀ-ում, Արցախում ու Ջավախքում գործող երիտասարդական ակումբների եւ ուսումնական հաստատությունների գործունեության ներկայացում, համագործակցության ապահովում, ակտիվացում եւ զարգացում, փորձի փոխանակում, երիտասարդական ակումբների համատեղ ծրագրերի մշակում, ակումբների տվյալների ու գործունեության մասին տեղեկատվության հավաքում: Մինչեւ օրս շարունակվում է համագործակցությունը…

Ուսանողական խորհրդի համար կարեւոր ձեռքբերում էր 2015թ. նոյեմբերի 17-ին Ուսանողների միջազգային օրվա կապակցությամբ Սյունիքի մարզային երիտասարդական կենտրոնի կազմակերպած «Ուսանողությունը՝ հզոր պետության կերտողներ» խորագրով միջոցառումը, որին մասնակցեցին Գորիսի պետական քոլեջի ուսանողները, ովքեր ակտիվ գործունեության շնորհիվ ստացան պատվոգրեր եւ նվերներ: Քոլեջի ՈՒԽ-ն ճանաչվեց 2014-2015թթ. լավագույն ծրագիր իրականացրած ուսանողական խորհուրդ: ■

Մեկը՝ քոլեջի դասախոսներից

Գորիսի պետական քոլեջը (նախկինում՝ մանկավարժական տեխնիկում, մանկավարժական ուսումնարան) կրթության ոլորտի՝ հանրությանը հայտնի բազմաթիվ երեւելի դեմքեր է տվել, կրթօջախի քուրայով են անցել գիտության, տնտեսության եւ մանկավարժության շատ մշակներ: Այսօր էլ կրթական այդ հաստատությունը շարունակում է նախորդ տասնամյակների ավանդույթները եւ պատրաստում մասնագետներ մեր կյանքի տարբեր ոլորտների համար: Եվ ազգօգուտ այդ գործը կազմակերպում են երեք տասնյակի հասնող մանկավարժներ: Նրանցից մեկը նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության գծով փոխտնօրեն Աննա Ասատրյանն է, ով նաեւ դասախոսում է: Նրա աշխատանքային գրքույկում առայժմ մի նշում կա՝ «Գորիսի պետական քոլեջ» պետական ոչ առեւտրային կազմակերպություն: Եվ որքանով հասկացա հետագա մեր զրույցից, քոլեջը դեռ երկար կլինի նրա գործունեության ասպարեզը...

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ՄԵԼԻՔ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ

Մանկավարժների գերդաստանից է սերում. պապն ու տատը Գորիսի մանկավարժական տեխնիկումն են ավարտել, գործուղվել Վայքի տարածաշրջանի Խնձորուտ գյուղ, հետո պապը բարձրագույն կրթություն է ստացել, Գորիսի գիշերօթիկ դպրոցի տնօրեն եղել, տատը ոսկեղենիկ հայերենի տառերն է ուսուցանել մանուկներին, հայրը՝ մաթեմատիկայի մասնագետ է, մայրը՝ գրադարանավարուհի: *«Ընթրիքից հետո մեր տանը մանկխորհ էր սկսվում»,* - պատկերավոր ներկայացնում է ընտանեկան միջավայրը: Նման միջավայրում աչք բացելով, բնականաբար, մասնագիտության ընտրության հարցում երկընտրանքի առջեւ չի կանգնել: *«Երազանքս էր ընդունվել Երեւանի պետհամալսարանի կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետ*, - ասում է, - ընտանիքում երեք երեխա էինք, Երեւանում *ուսանող պահելը դժվար էր, մերոնց վիճակի մեջ եմ մտել: Մտածեցի՝ քանի որ մայրաքաղաքի բուհում ֆիզիկա եւ մաթեմատիկա պիտի ուսումնասիրեմ, Գորիսում էլ նույն բանին կարելի է հասնել»:*

Գորիսի համալսարանն ավարտելուց հետո նախկին տնօրեն Ագնեսա Դարբինյանի հրավերով (դա 2005 թվականին էր) սկսել է դասավանդել քոլեջում, երեք տարի աշխատելուց հետո մագիստրատուրա է ավարտել: Համալսարանում սովորելիս կուրսի ավագն է եղել, ինչը հնարավորություն է տվել շոշափել ուսանողական կյանքի զարկերակը: Նաեւ նպատակադրված էր ուսումը շարունակել, իր ասելով՝ երեք գիտական հոդված ունի հեղինակած, վերջինը Գորիսի ջրամատակարարմանն է վերաբերում: Բայց գիտության խորխորատներում հայտնվելու ցանկությունն այդպես էլ անկատար մնաց... Գիտական թեզ պաշտպանելու նպատակ ուներ, բայց ինչ-ինչ հանգամանքներ խանգարեցին:

Նորանկախ Հայաստանում շրջադարձային փոփոխություններ եղան նաեւ մանկավարժության ոլորտում: Ի սկզբանե զրուցակցիս կարծիքը ցանկացա իմանալ նոր ժամանակների մանկավարժության մասին: *«Խորհրդային ժամանակներում դասավանդումն իրականացվում էր դաս-դասարանային մեթոդով, խորհրդային դպրոցն ուներ անուրանալի նվաճումներ, սակայն փոխվել են ժամանակները, այսօրվա սովորողը մանկավարժից բոլորովին այլ պահանջներ ունի, ուստի դասախոսը պետք է կարողանա ճիշտ համադրել նորը եւ ավանդականը,* - ասածը հաստատում է նաեւ այն համոզմունքով, որ տեսական գիտելիքներն անպատճառ գործնականում պիտի ամրապնդվեն, - *խորհրդային կրթական համակարգում շեշտը դրվում էր գիտելիքի ձեռքբերման վրա, իսկ հիմա կարեւորվում են հմտությունները, կարողությունները: Բացատրել-ասելը գործի մի մասն է միայն, դա միջակ դասավանդողի մոտեցում է: Կա այսպիսի մի ճշմարտություն՝ այն, ինչ լսում եմ, մոռանում եմ, տեսածս հիշում եմ, իսկ այն, ինչ կիրառում եմ, սովորում եմ»:*

Այս մոտեցումները հատկապես կարեւորվում են նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության ոլորտում: Ի դեպ, Գորիսի քոլեջն աստիճանաբար, միջին մասնագիտական կրթական ծրագրերի հետ մեկտեղ, իրականացնում է նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն: Կրթօջախում արդեն ուսուցանվում է արհեստագործական չորս մասնագիտություն՝ համակարգիչների շահագործում, վարսահարդարություն, նաեւ խոհարար ու ատաղձագործ են պատրաստում: Նոր ուսումնական տարում կունենան եւս երկու մասնագիտություն՝ քարի վրա փորագրող եւ դերձակ-մոդելավորող: Ի դեպ, նախորդ տարում էլ դերձակ-մոդելավորողի խումբ կար, բայց ցանկացողներ չեն եղել, հուսով են, այս ուստարում այդ խմբերը կհամալրվեն:

Արհեստագործական խմբերի նոր ուսումնական պլաններից գոհ է, ինքն էլ հակված է այն տեսակետին, որ ուսանողին անհրաժեշտ է տալ այն, ինչ պետք է արհեստավոր դառնալու համար. *«Լրացուցիչ շատ ենք սիրում ավելորդ մտքեր հրամցնել ուսանողին, ծանրաբեռնում ենք գիտելիքներով, ինֆորմացիայով, մինչդեռ արհեստագործական հոսքում որքան շատ լինեն գործնական պարապմունքները, այնքան շուտ սովորողը կյուրացնի նախընտրած մասնագիտությունը»:* Այս համատեքստում նաեւ նկատում է, որ արտասահմանում քոլեջներին մեծածավալ նյութական միջոցներ են տրամադրվում, որ գործնական պարապմունքներն արդյունավետ անցկացվեն, մինչդեռ իրենք նման հնարավորություն չունեն:

Քոլեջում նաեւ մաթեմատիկա եւ ինֆորմատիկա է դասավանդում: Ուսումնական առարկաներից յուրահատուկ է համարում մաթեմատիկան, սիրում է իր դասավանդած առարկան եւ բացատրում՝ թե ինչու: *«Մաթեմատիկան սովորողին տանում է որոնումների ճանապարհով, երբ աշակերտները հասկանում են խնդրի լուծումը, աչքերից իմանում ես,* - այդպիսի դիտարկում ունի, - *անչափ հաճելի է, երբ մի բան ես բացատրում, այն «տեղ է հասնում»: Բացի այդ, պատահում է՝ շրջապատի հետ լարված հարաբերություններ եմ ունենում, բայց երբ դաս եմ պարապում, թոթափում եմ լարվածությունը»: «Չսովորող ուսանող չկա, չտրամադրված ուսանող չկա, կարեւորն այն է, որ ուսումնական նյութը մատուցելու ձեւը ճիշտ ընտրես, իսկ մանկավարժի պարապած դասը լավագույնս է բնորոշում նրան, նյութը մատուցելու այնպիսի մեթոդներ պիտի ընտրես, որ ուսանողը հաճույք ստանա, այլապես նա հոգնել է սովորական դասից, դասախոսություն գրելուց: Կարեւորն այն է, որ ամենաթույլ աշակերտին ընդգրկես դասապրոցեսի մեջ, որ այդ օրն ինքը տպավորված գնա տուն»,* - կանխում է հերթական հարցս եւ հիշում գերմանացի հայտնի մանկավարժի ձեւակերպումը: *«Վատ ուսուցիչը ճշմարտությունը մատուցում է, լավը՝ սովորեցնում գտնել այն»:*

Զրույցի ընթացքում այն միտքն է հայտնում, որ ինքնակատարելագործման ձգտումը երբեք չպիտի լքի մանկավարժին եւ դա այսպես է ձեւակերպում. *«Չեմ ուզում մի օր կորցնել իմ մասնագիտությունը»:* Խոսում է քոլեջի ուսանողական կազմի առանձնահատկությունների մասին. *«Մենք աշխատում ենք ոչ միայն դպրոցը նոր ավարտած շրջանավարտի հետ, այլեւ մինչեւ 50 տարեկան մարդկանց: Տարիքային նման տարբերություն ունեցող կոնտինգենտի հետ աշխատելը եւ՛ պատասխանատու է, եւ՛ հետաքրքիր, եւ՛ դժվար»:*

Գործընկերոջ մասին կարծիք հայտնեց կրթօջախի տնօրեն Կարեն Լազարյանը. *«Աննա Ասատրյանի պատասխանատվությունը, գործին անմնացորդ տրվելու պատրաստակամությունը նկատելի էին քոլեջում աշխատելու առաջին քայլերից: Մանավանդ, երբ 2009-ին կարգավիճակս փոխվեց, տնօրեն նշանակվեցի, նրա պատասխանատվության զգացումն ինձ համար ավելի առարկայական դարձավ: 2013-ին առաջարկեցի ուսմասվար աշխատել՝ արհեստագործական բաժիններում ուսումնական պրոցեսն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով: Մտորումների մեջ ընկավ, բայց դա կարճ տեւեց... Աննան այսօր հարգված է կոլեկտիվի եւ իր սաների կողմից, մի կարեւոր հանգամանք եւս. ուսանողը զգաստանում է նրան տեսնելիս: Նրա հետ կարելի է տարբեր հարցեր, թեմաներ քննարկել, ծրագրեր նախանշել: Լուրջ եւ պատրաստված անձնավորություն է»:*

Մանկավարժն ի՞նչ հատկանիշներ պիտի ունենա. աստիճանաբար հարցերի ուղղվածությունը տեղափոխում եմ գիտելիքների ավանդման ոլորտը: *«Մանկավարժը ծնողի աչքով պիտի նայի ուսանողին: Նայեք նրա աչքերին, տեսեք՝ տխո՞ւր է, թե՞ ոչ, անկեղծորեն հետաքրքրվեք որպիսությամբ եւ նոր դրանից հետո անցեք գիտելիք ավանդելուն: Ուսանողը դասագրքից էլ գիտելիք կստանա: Կբացի, կգտնի իրեն հետաքրքրող թեման, կսերտի այն: Բայց սրտացավ վերաբերմունքից հետո միայն ուսանողն իրեն ապահով կզգա մանկավարժի կողքին: Նրան չսիրեցիր, ոչ մի արդյունքի չես հասնի: Ամեն ինչում դասավանդողն օրինակ պիտի ծառայի իր ապրած կյանքով, իր հոգեկերտվածքով, իր հիստուկացով: Նաեւ պիտի հիշել հայտնի խոսքը՝ լավ վարվելածեւը բաղկացած է մանր ինքնազոհողություններից»,* – Աննա Ասատրյանի այսպիսի մտորումներով էլ ավարտեցինք մեր հանդիպումը քոլեջի նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության գծով փոխտնօրենի հետ:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Ժամանակի օվկիանում՝ առանց նավաբեկության

էջ 3 դեղագործական բաժինը: Հիմա էլ «Համակարգիչների շահագործում» բաժնի ուսանողուհի է:

– Երբ այս բաժինն էլ ավարտես, հետո ո՞ր բաժնում ես սովորելու, – կատակով հարցնում եմ նրան...

* * *

Հանդիպում եմ հերթական ուսանողին: Չի ուզում ներկայանալ անուն ազգանունով, միայն ասում է, որ Գորիսի տարածաշրջանի գյուղերից է: Ու պատմում է...

– Ինձ դպրոցում գրատախտակի մոտ ուսուցիչները երբեք չեն կանչել: Վատ սովորող աշակերտի համբավ ունեի: Մի կերպ ավարտեցի դպրոցը եւ եկա քոլեջ: Ուսումնական տարին նոր էր սկսվել: Մաթեմատիկայի դասախոս Աննա Ասատրյանն ինձ կանչեց գրատախտակի մոտ: Ես զարմացած նայեցի նրան: Գրատախտակն ո՞ւր, ես՝ ո՞ւր: Դասախոսի հուսադրող ժպիտը ստիպեց ինձ մոտենալ գրատախտակին: Նրա օգնությամբ սկսեցի գրել վարժությունը: Նա անընդհատ ինձ կանչում էր գրատախտակի մոտ: Ես արդեն սկսեցի առանց օգնության վարժություններ, խնդիրներ լուծել: Հիմա մեր գյուղում օգնում եմ շատերին: Այստեղ մենք բացվում ենք, ստանում կայուն գիտելիքներ, որ երբեք չենք մոռանա:

...Համամիտ եմ ուսանողի հետ: Ու լրացնեմ նրան: Երբ ավարտեցի Գորիսի պետական քոլեջը (այն ժամանակ՝ Գորիսի մանկավարժական ուսումնարան), աշխատանքի անցա Գորիսի շրջանային «Զանգեզուր» թերթում՝ լրագրող: Բարձրագույն կրթություն ստանալու միտքն ինձ հանգիստ չէր տալիս: Եվ մանկավարժական ուսումնարանն ավարտելուց յոթ տարի անց, առանց պարապելու, հաջողությամբ քննություն հանձնեցի եւ ընդունվեցի Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Ուզում եմ ասել՝ քոլեջում ստացած գիտելիքները վաղեմության ժամկետ չունեն: Դրանք բոլոր ժամանակների համար են...

* * *

Կարեն Լազարյանը եղել է Գորիսի համայնքի ավագանու անդամ: Ավագանու նիստերի ժամանակ միշտ դրսեւորում էր հետաքրքիր մտածալակերպ, յուրաքանչյուր հարցի քննարկման ժամանակ աչքի էր ընկնում հետաքրքիր շեշտադրումներով, բանավիճում էր, քննադատում, եւ բուռն քննարկումների արդյունքում Գորիսի ավագանին ընդունում էր համայնքի խնդիրների լուծման ճիշտ որոշում:

2009 թվականից ղեկավարում է Գորիսի պետական քոլեջը: Հիմա բավականին դժվար մարտահրավերների առջեւ են կանգնած միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունները: Ժամանակի հորձանուտում արագորեն կողմնորոշվելը, ճիշտ կողմնորոշիչներ ընտրելը դարձել են հրամայական, դարձել քոլեջների հարատեւման պայման: Հօգուտ երիտասարդ տնօրենի, կարելի է ասել, որ նրան հաջողվել է ժամանակի օվկիանում առանց տարուբերվելու առաջ շարժվել, շարունակել ընթացքը: Եվ առանց նավաբեկության՝ գնալ հեռավոր նավարկության: Իսկ այդ ճանապարհը բռնելու գործիքներից է քոլեջը ներկայացնելու համար ամեն հնարավոր հարթակ օգտագործելը: Ու չես զարմանում, որ հանրակրթական դպրոցի 12-րդ դասարանն ավարտածները նախընտրում են սովորել քոլեջում: Եվ որ շատ կարեւոր է, քոլեջն իր ուշադրության կենտրոնում է պահում աշակերտների մասնագիտական ճիշտ կողմնորոշման հարցը: Դպրոցներում ժամանակին կազմակերպում են հետաքրքիր հանդիպումներ, ներկայացնում կրթօջախի հարուստ կենսագրությունը: Իսկ քաղաքում կազմակերպվող միջոցառումներից երբեք անմասն չի մնում քոլեջը:

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ՄԵԼԻՔ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ

Կենսաբանության կաբինետում

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ՄԵԼԻՔ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ

Փայտամշակման արհեստանոցում

Ու թե ուզում ես հարատեւել, ուրեմն ձեռքդ միշտ ժամանակի զարկերակի վրա պահիր: Այսպես են մտածում եւ գործում Գորիսի պետական քոլեջում՝ տնօրենից, դասախոսներից, վարպետներից սկսած... ■

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ՍԵՒԱԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ

Գորիս. համայնապատկեր՝ կենտրոնում պետական քոլեջի շենքը

Հայտարարություն

ՀՀ կրթության եւ գիտության նախարարության «Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը (նախկին մանկավարժական ուսումնարան) հայտարարում է 2016-2017 ուսումնական տարվա ընդունելություն առկա (ստացիոնար) ուսուցմամբ հետեւյալ մասնագիտություններով

Մասնագիտություններ՝ ըստ միջին մասնագիտական կրթական ծրագրերի

	Դասիչը	Մասնագիտությունը	Առկա ուսումնառության տեւողությունը (տարի): Հիմնական ընդհանուր կրթության հիման վրա	Առկա ուսումնառության տեւողությունը (տարի): Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիման վրա	Որակավորումը	Տարեկան ուսման վարձը (դրամ)	Մրցութային համարվող առարկաները ընդունելության ժամանակ: 1	2	3	Ընդունելության քննական առարկաները: 1	2	3
1	0612.02.5	Հաշվողական տեխնիկայի եւ ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում	-	3	Տեխնիկ-ծրագրա-վորող	120 000	Մաթեմատիկա	Ֆիզիկա	Հայոց լեզու եւ գրականություն	-	-	-
2	0112.01.5	Նախադպրոցական կրթություն	-	2	Դաստիարակ՝ նախադպրոցական կրթության	150 000	Հայոց լեզու եւ գրականություն	Մաթեմատիկա	Հայոց պատմություն	-	-	-
3	0916.01.5	Դեղագործություն	3	2	Դեղագործ	150 000	Հայոց լեզու եւ գրականություն	-	-	Կենսաբա-նություն	-	-
4	0212.01.5	Դիզայն	-	4	Դիզայներ	150 000	Հայոց լեզու գրականություն	-	-	Գունանկար	Գծանկար	Կոմպոզիցիա
5	0912.02.5	Մանկաբարձական գործ	4	3	Մանկաբարձ	150 000	Հայոց լեզու եւ գրականություն	-	-	Կենսաբա-նություն	-	-
6	0913.02.5	Քույրական գործ	4	3	Բուժքույր/ բուժեղբայր	150 000	Հայոց լեզու եւ գրականություն	-	-	Կենսաբա-նություն	-	-

Մասնագիտություններ՝ ըստ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրերի

	Դասիչը	Մասնագիտությունը	Հիմնական ընդհանուր կրթության հիման վրա	Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիման վրա	Որակավորումը	Տարեկան ուսման վարձը (դրամ)	Մրցութային 1	2	3	Քննական 1	2	3
1	0611.01.4	Համակարգիչների շահագործում	-	1	Համակարգիչների օպերատոր	100 000	Մաթեմատիկա	Ֆիզիկա	Հայոց լեզու եւ գրականություն	-	-	-
2	1012.01.4	Վարսավիրական արվեստ եւ զարդային դիմահարդարում	-	1	Վարսահարդար	100 000	Երկրաչափություն	Կենսաբա-նություն	Հայոց լեզու եւ գրականություն	-	-	-
3	0732.06.4	Ատաղձագործական, մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքներ	3	-	Հյուսն	-	Երկրաչափություն	Մաթեմատիկա	Հայոց լեզու եւ գրականություն	-	-	-
4	1013.03.4	Խոհարարական գործ	-	1	Խոհարար	100 000	Կենսաբանություն	Քիմիա	Հայոց լեզու եւ գրականություն	-	-	-
5	0723.03.4	Կարի արտադրության տեխնոլոգիա	3	-	Դերձակ	-	Մաթեմատիկա	Քիմիա	Հայոց լեզու եւ գրականություն	-	-	-
6	0213.01.4	Գեղանկարչություն եւ քանդակագործություն	3	-	Փորագրող՝ քարե գեղարվեստական իրերի	-	Երկրաչափություն	Մաթեմատիկա	Հայոց լեզու եւ գրականություն	-	-	-

Ծանոթություն

Ընդունելության կարգին առնչվող հարցեր լինելու դեպքում դիմել ընդունող հանձնաժողովին:

Գորիս, Հայկազունիների 4,
gorisstatecollege@mail.ru
(0284) 2-01-85, 2-28-42, (094) 20-20-93
www.goriscollege.com
www.facebook.com/Gorisstatecollege
www.ok.ru/gorisipetakancollege

Սյունյաց երկիր
Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47:
Էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել:
Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):
«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® Նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1720, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 11.05.2016թ.: